**Զորավան գյուղ,Վարչական ղեկավար՝ Բաղդասար Թովմասյան**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Գյուղի ներկայիս անվանումը** - Զորավան
**Գյուղի պատմական անվանումները** - Փոքրավան
**Գյուղի հիմնադրման ժամանակաշրջանը** - 1973թ
**Որ համայնքներին է սահմանակից համայնքը** -Արագյուղ, Եղվարդ, Նոր-Գեղի, Արգել, Քարաշամբ և Սարալանջ
**Գյուղի մակերեսը** - 3801,9 հա
**Հեռավորությունը մայրաքաղաքից** - 20կմ
**Բնակչության թիվը** - 1689
**Բնակչության կազմը** – հայեր, եզդիներ
**Օգտակար հանածոներ** - չկա
**Կրթական հաստատություններ** - միջնակարգ դպրոց, մսուր-մանկապարտեզ
**Մշակութային հաստատություններ** - Մշակույթի տուն
**Մարզական հաստատություններ** -չկա
**Արտադրական ձեռնարկություններ** - <<Եղվարդ Համալիր>> ՍՊԸ
**Բնակչության հիմնական զբաղմունքը** - գյուղատնտեսություն, անասնապահություն
**Հոգևոր կառույցներ** - Եկեղեցի ԶՈՐԱՎԱՐ 7-րդ դար, Եկեղեցի Սբ. Մարիամ Աստվածածին 19-րդ դար
**Պատմամշակութային հուշարձաններ** - Ամրոց <<Դովրի>>, Քա 4-րդ հազ. վերջ -1 հազ, Դամբարանադաշտ Քա 2-1 հազ. վերջ, 10 Խաչքար 10-16 դդ
**Համայնքի մասին գրքի առկայություն** - չկա

**ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Գյուղը կառուցվել է 1972-80 թթ., լքված Խաչո գյուղի բնակավայրի տարածքի վրա: Գտնվում է Կոտայք մարզի Նաիրի տարածաշրջանի Արայի լեռան արևելյան ստորոտում, Եղվարդ-Բուժական խճուղու 6 կմ վրա: Գյուղի կառուցման հիմնական նպատակը եղել է 11 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասունների մատղաշի աճեցման և բտման համալիրի ստեղծումը: Սկզբում անվանվել է Փոքրավան: Համալիրը նախագծային հզորության հասնելուց հետո վերանվանվել է Զորավան: Զորավան անվանումը տրվել է ի շնորհիվ համայնքի տարածքում գտնվող 7-րդ դարի Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից կառուցված Զորավան ճարտարապետական հուշարձանի: Գյուղի բնակչությունը հավաքված է Անդրկովկասի երեք հանրապետությունների շրջանների գյուղերից ու քաղաքներից, կազմելով մեկ համերաշխ համայնք: Կլիման չոր ցամաքային է: Խմելու ջուրը ջրմուղով է, 10 կմ հեռավորությունից բերվում է Կարենիս գյուղի մոտակայքի բնական աղբյուրից: Ոռոգման ջուրը մատակարարվում է Սևանից: